

**Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից
բավարարվածության առցանց հարցման արդյունքները /2016-17 ուստարի/**

Բավարարվածությունը գիտական գործունեությունից

30.09.2017թ.

Իդեալականորեն բուհի դասախոսի աշխատանքային համակարգաստեղծ երկու առանցքային հատկանիշներն են **դասավանդումը և գիտական գործունեությունը**: Մնացած կողմերը՝ ներբուհական հասարակական գործունեություն, արտաբուհական սոցիալական ակտիվություն, ոչ պաշտոնական հարաբերություններում տարբեր դերեր և այլն, տվյալ հատկանիշներից ածանցյալ են այն իմաստով, որ լավագույն դեպքում պետք է ծառայեն դրանց արդյունավետ իրագործմանը: Ըստ որում՝ տեսականորեն շատ դժվար է այդ երկու հատկանիշների միջև կարևորության խնդիր դնել այն պատճառով, որ ճանաչողության և հասարակությունների զարգացման ժամանակակից տեմպերը, համընդհանուր միտումներին հարմարվելու, դրանց հետ ներդաշնակվելու ազգապետական և քաղաքակրթական առանձնահատկությունները, տվյալ գործընթացներով և ինքնազարգացման անհրաժեշտությամբ պարտադրված կրթական համակարգերի բարեփոխումները **արդյունավետ ուսուցմանը օժանդակող գիտական գործունեությունը դարձնում են դասավանդման հետ հավասար կարևոր**: Ու եթե առարկայական ծրագրի բովանդակությանն առնչվող սեփական գիտական աշխատանքների արդյունքները դասախոսի կողմից օգտագործվում են ուսուցման գործընթացում, ակնհայտ է, որ այդ դեպքում ուսանողի կողմից գիտելիքների ու հմտությունների ձեռքբերումը դառնում է ավելի զգալի ու արդյունավետ: Տարբեր չափով ու յուրովի դա վերաբերում է կրթական ծրագրում ներառված գրեթե բոլոր դասընթացներին:

Սակայն գաղտնիք չէ, որ իրականությունը, իդեալականի հետ համեմատած, փոքր-ինչ այլ է: Հայտնի ու անհայտ մի շարք առարկայական ու անձնական գործոնների պատճառով պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեությունը շատ բուհերում լիարժեքորեն չի կատարում այն ցանկալի դերը, որը կրթական ծրագրերի արդյունավետ իրագործման հարցում վերագրված է իրեն: Մասնավորապես՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում արդյո՞ք դրան խոչընդոտող հանգամանքներ կան այն դեպքում, երբ ղեկավարությունը դա համարժեքորեն կարևորում է և իրապես ու գործնականորեն պատրաստ է կարելվույն օժանդակելու տվյալ խնդրի լուծման գործում: Դա բազմիցս քննարկվել է տնօրենության ու գիտխորհրդի նիստերում, ֆակուլտետային ու ամբիոնային պաշտոնական հանդիպումների ընթացքում:

Դրա ապացույցներից են նաև պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեության և դասավանդման գործընթացում դրանց արդյունքների ներառման հնարավորությունների վերաբերյալ հարցումների միջոցով իրականացված ուսումնասիրությունները: Դրանք իրականացվել են 2016 և 2017 թվականների մայիս-հունիս ամիսներին ՄԿՈԱ բաժնի կողմից, ընդ որում՝ 2017 թ. այն իրականացվել է առցանց (on-line):

Հարցաշարում ընդգրկվել են հարցեր, որոնք ***բացահայտում են***՝

- դասախոսների վերաբերմունքը գիտական գործունեության հանդեպ,

- գիտական գործունեությանը օժանդակող կամ խոչընդոտող գործոնները,
- դասավանդման գործընթացում գիտական գործունեության արդյունքների ներառվածության փաստերը,
- տարածաշրջանային խնդիրների հետ գիտական հետաքրքրությունների կապվածությունը, դրանցում դասախոսների մասնակցության պատրաստակամությունը:

Համապատասխան հարցերը գնահատվել են 5-բալանի սանդղակով, որտեղ 2-ը ամենացածր գնահատականն է, 5-ը՝ ամենաբարձր, իսկ 1-ը՝ դժվարանում եմ պատասխանել: Հարցաշարում ընդգրկվել են նաև մի շարք «բաց հարցեր», որոնց միջոցով առաջարկվել է ներկայացնել սեփական կարծիքներն ու նկատառումները:

Հարցմանը մասնակցությունը մնացել է դասախոսների պատասխանատվության վրա, քանի որ նման հարցումներին մասնակցությունը, ըստ գիտության պահանջների, բացարձակապես կամավոր է ու գիտականորեն «չի հանդուրժում» որևէ ստիպողականություն: 2016 թ. հարցմանը կամավոր մասնակցել է մասնաճյուղի տարբեր ամբիոնների, գիտական կոչման, տարիքի և սեռի 120 դասախոսից 83-ը (69%)¹, իսկ 2017 թ. հարցմանը 126-ից՝ 68-ը (54%): Մասնավորապես 2016 թ. հարցմանը մասնակցել է գիտության երեք դոկտորներից մեկը, 67 թեկնածուներից 46-ը, իսկ 2017 թ. հարցմանը՝ գիտության 3 դոկտորներից 2-ը, 54 թեկնածուներից 33-ը: Նման կամավոր մասնակցության արդյունքում բավարար են ներկայացված նաև մայրաքաղաքից հրավիրված դասախոսները: Թեև մշակվող տվյալներում այդ փաստն առանձնացված չէ, սակայն կարծում ենք, որ պատասխաններում դա առկա է որպես միջնորդավորված գործոն: Կարող ենք ասել, որ որակաքանակական առումով հարցաշարին պատասխանողները ներկայացնում են մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմը:

Ներկայացնենք հարցման արդյունքները և դրանց որոշակի վերլուծությունը:

Այն հարցին, թե դասախոսական աշխատանքի համար գիտական գործունեությունը մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմը որքանով է կարևորում, ներկայացված է *Աղյուսակ 1-ում*:

Աղյուսակ 1.


Որքանով եք Ձեր դասախոսական աշխատանքի համար կարևորում գիտական գործունեությունը	2016		2017	
	/83 դասախոս/		/68 դասախոս/	
բոլոր դեպքերում կարևոր է	40	48,2%	26	38,2%
դա ինձ համար և՛ կարևոր, և՛ կարևոր չէ	3	3,6%	6	8,8%
ինձ համար դա անհրաժեշտություն է	38	45,8%	34	50,0%
ինձ համար դա քիչ կարևոր է	2	2,4%	1	1,5%
ինձ համար դա կարևոր չէ	0	0%	1	1,5%
Ընդամենը՝	83		68	

Ներկայացված տվյալները փաստում են, որ հարցվածների գերակշիռ վիճակագրական մեծամասնությունը (համապատասխանաբար՝ 94%-ը (48,2% + 45,8%) և 89%-ը (38,2% + 50,0%))

¹ ԵՊՀ ԻՄ Գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներ (ԳԱՑ 2011-16, <http://ijevan.yu.am/wp-content/uploads/2011/08/ysuib-report-gac-2011-2016.pdf>):

գիտակցում է, որ գիտական հետաքրքրությունները և դասավանդմանը զուգընթաց գիտական ուսումնասիրություններ կատարելն իր աշխատանքային երկու հիմնական «հոգսերից» մեկն է: Մյուս կողմից՝ միայն ենթադրություններ կարելի է կատարել, թե այդ մի քանի դասախոսներն ինչու չեն պարտադիր համարել դասախոսական աշխատանքում գիտական գործունեությունը: Մի դեպքում դա կարող է կապված լինել տարածաշրջանային սոցիալ-տնտեսական իրավիճակի, մեկ ուրիշում՝ արժեքային համակարգի գերակայությունների, երրորդում՝ աշխարհայացքային համոզմունքների և, թերևս, որ ամենաանցանկալին է, տվյալ անհրաժեշտությունը չգիտակցելու կամ անձնական և առարկայական գործոնները շփոթելու (չտարբերակելու) հետ և այլն: Այն, որ ասվածն ունի տրամաբանական հիմնավորվածություն և որոշակի հիմքեր, թերևս միջնորդավորված ցույց են տալիս մյուս հարցերի պատասխանները:

Այսպես՝ այն հարցին, թե **ամբիոնը որքանով է խթանում դասախոսների գիտական գործունեությունը (Գրաֆիկ 1)**, դասախոսների տված գնահատականների միջինը 5-բալանի սանդղակով հավասար է մոտավորապես 3,76-ի այն դեպքում, երբ գիտական գործունեության առաջնայնությունը կարևորելու նրանց գնահատականը բավականին բարձր է:



Այսինքն՝ կարելի է ասել, որ վիճակագրորեն առկա է որոշակի խզում («դիալեկտիկական հակասություն») դասախոսների կողմից գիտական գործունեության անհրաժեշտության ու կարևորության գիտակցման և այն կյանքի կոչելու համար իրական հնարավորությունների միջև՝ կապված համապատասխան ամբիոններում ու դասախոսների մոտ առկա օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանների հետ:

Նման, եթե կարելի է ասել, գիտականորեն հիմնավորված որոշ պասիվության վրա ազդող գործոնները բացահայտելու նպատակով դասախոսներին ուղղվել է համապատասխան բաց հարց այն մասին, թե ինչն է խոչընդոտում գիտահետազոտական գործունեության իրականացմանը, գիտական միջոցառումներին մասնակցությանը, գիտական ծրագրերում ընդգրկվելուն:

Շեղանկազուտական գործունեության խոչընդոտների վերաբերյալ հարցին ոչ բոլոր մասնակիցներն են պատասխանել, իսկ հարցին պատասխանած դասախոսների մեծ մասը

(կեսից ավելին) նշել է, որ խոչընդոտներ իրենք չեն տեսնում: Մի քանի պատասխաններում տարբեր ձևակերպումներով շեշտվել է զբաղվածությունը, ժամանակի սղությունը, արտաքին և ներքին շարժառիթների պակասը, տեղեկատվության, հետազոտական տեխնիկայի պակաս հնարավորությունները, ավելորդ թղթարարությունը (բյուրոկրատիան), ոչ բավարար գիտական համագործակցությունը մյուս բուհերի հետ, օտար լեզուների ոչ բավարար իմացությունը:

Գիտական միջոցառումներին չմասնակցելու (կամ ոչ բավարար մասնակցության) վերաբերյալ դասախոսները նշում են 2-3 հիմնական պատճառ, որոնք են՝ ֆինանսական հնարավորությունները, անիրագրելիությունը և ժամանակի սղությունը (կենցաղային ու անձնական հոգսերով զերգբաղվածությունը, որը գործնականում անհնար է դարձնում գիտական աշխատանքին պատշաճ ժամանակ տրամադրելը): Միաժամանակ մի քանիսը շեշտել են, որ մասնաճյուղում սակավ են կամ գրեթե բացակայում են գիտաժողովները (հանրապետական, միջբուհական):

Ասվածից կարելի է կատարել միջանկյալ հետևություն, այն է՝ մասնաճյուղի դասախոսները վիճակագրորեն համարում են, որ գիտական ոչ լիարժեք ակտիվությունն առավելապես ունի արտաքին՝ իրենց անձնական ցանկությունից ու համոզվածությունից դուրս պայմանավորվածություն և կապված է սոցիալ-տնտեսական ու կազմակերպչական խնդիրների հետ: Որքանով է այն ճշմարտացի ու արդարացված, կարծում ենք, որ գնահատման չափանիշների ու մոտեցումների հարց է: Տեսականորեն և գործնականորեն չմերժելով նման առնչության հնարավորությունը հատկապես ռազմաքաղաքական ներկա պայմաններում, այն էլ՝ սահմանամերձ տարածաշրջանում՝ միաժամանակ հարկ է նշել, որ այն բացարձականացնելը օգտակար չէ: Ինչպես գիտության զարգացման պատմությունից, այնպես էլ առկա գիտական առօրյայից կարելի է բերել բազմաթիվ օրինակներ, երբ գիտնականը գիտությամբ զբաղվել է ու որոշակի արդյունքների է հասել ծայրահեղ ծանր սոցիալ-կենցաղային դժվարությունների, կառավարման տարբեր օղակների կողմից ամենատարբեր խոչընդոտների հարուցման պայմաններում: Հայտնի են բազմաթիվ անձնագոհության, ինքնագոհաբերման օրինակներ գիտության նվիրյալների կողմից: Այսինքն՝ գիտական պասիվությունը զուտ արտաքին գործոններով պայմանավորելը լիարժեքորեն չի կարող համապատասխանել իրականությանը: Հավանաբար այստեղ որոշակի գործոն է նաև ինքնաքննադատության պակասը, որը վիճակագրորեն «քողարկվել է» հարցաշարին մասնակցող պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից: Նման հետևության համար հիմք է այն փաստը, որ գիտական ակտիվության խոչընդոտների մեջ, բացի այն պատասխանից, որտեղ նշվել է նման ցանկության բացակայությունը, ուրիշ «ինքնաքննադատական» որևէ պատասխան ամրագրված չէ:

Միջնորդավորված ձևով խնդրո առարկայի հետ է կապված նաև տարածաշրջանային խնդիրների հանդեպ մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական հետաքրքրությունների հարցը (*Գրաֆիկ 1*): 2016 թ. հարցմանը մասնակցած 83 դասախոսից 47-ը (56,6%) և 2017 թ. հարցմանը մասնակցած 68 դասախոսից 40-ը (58,8%) նշել են, որ իրենց մասնագիտացումը լիարժեքորեն թույլ է տալիս զբաղվելու տարածաշրջանային հիմնախնդիրների ուսումնասիրությամբ (5-բալանի սանդղակով գնահատել են 5 և 4):

Մնացած պատասխաններում հավաստվել է, որ իրենց մասնագիտացումը մասամբ թույլ է տալիս ուսումնասիրել տարածաշրջանային հիմնախնդիրները կամ դրանց հետ գործնական առնչություն չունի: Եղել են դասախոսներ, որոնք ուղղակի դժվարացել են պատասխանել: Կարծում ենք, որ ընդհանուր գնահատականի տեսանկյունից մասնաճյուղն ունի բավական մեծ ռեսուրսներ՝ կապված տարածաշրջանային խնդիրների լուծմանը գիտական օժանդակություն ցուցաբերելու հետ: Օրինակ՝ 2016 թ. հարցման արդյունքները ցույց են տալիս, որ Մանկավարժության և հոգեբանության, Հայոց պատմության և հասարակագիտության, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոններից հարցմանը մասնակցած գրեթե բոլոր դասախոսները նշել են, որ իրենց մասնագիտացումներն ընձեռում են տարածաշրջանային խնդիրներն ուսումնասիրելու ամենալայն հնարավորությունները *(Աղյուսակ 2)*.

Աղյուսակ 2.

Ամբիոնի անունը	Ընդ.	դժ/պ	Գնահատականներ	
			4	5
Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության	12	2	4	
Ընդհանուր տնտեսագիտության Տուրիզմի կառավարման և մշակութաբանության	11		3	6
Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների	4	1		2
Հայոց լեզվի և գրականության	9			1
Հայոց պատմության և հասարակագիտության	12		1	8
Մանկավարժության և հոգեբանության	10			9
Օտար լեզուների (ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն)	18		9	
Գծանկարի, գունանկարի և քանդակի	4		1	1
Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի	3	1	2	
Ընդամենը	83	4	20	27

Այն, որ այս ռեսուրսները հնարավոր է ավելի օպտիմալ օգտագործել, վկայում է այն փաստը, որ 2011-2016 թթ. ընթացքում մասնաճյուղի դասախոսների 28 թեկնածուական և 1 դոկտորականատենախոսություններից միայն երկու թեկնածուականատենախոսություններն են նվիրված եղել տարածաշրջանային հիմնախնդիրներին: Մինչդեռ հանրապետության գիտական շրջանակները ավելի շատ պետք է կարևորեն տարածաշրջանային թեմաներով հետազոտությունները: Սույն առումով թերևս հուսադրող է և հետագա գիտական ուսումնասիրությունների համար յուրովի խթան ու ռեսուրս՝ Տավուշի մարզի խնդիրներին նվիրված ավարտական աշխատանքների մեծ քանակությունը: Այսպես՝ 2012-16 թթ. Անտառագիտության ամբիոնում պաշտպանված 122 ավարտական աշխատանքներից 70-ը, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնում պաշտպանված 201 ավարտական աշխատանքներից 34-ը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնում պաշտպանված 59 ավարտական աշխատանքներից 24-ը նվիրված են եղել տարածաշրջանային հիմնահարցերին: Բնակչության, հասկանալի է, որ մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմում մեծ թիվ են կազմում մայրաքաղաքից հրավիրված դասախոսները: Նրանցից շատերն ունեն տասնամյակների գիտաուսումնական

աշխատանքային ստաժ, կայուն գիտական հետաքրքրություններ, որոնք այդքան հեշտ չէ վերափոխել մարզի բազմաբնույթ խնդիրների հետազոտման ուղղությամբ: Այդուհանդերձ, հատկապես ռազմավարական տեսանկյունից կարևոր է, որ աստիճանաբար տեղային երիտասարդ կադրերով դասախոսական անձնակազմը համալրելուն գուզընթաց՝ գրանցվի նաև տարածաշրջանային խնդիրների հանդեպ գիտական հետաքրքրությունների որակական աճ, որը զուտ գիտական շահերի կողքին ունի նաև բարոյահայրենասիրական բաղադրատարր: Դա հրաշալի ընդառաջ քայլ է նաև մեր երիտասարդության (այդ թվում՝ մասնաճյուղի ուսանողության) հայրենասիրական այն դրսևորումներին, որոնց ականատեսն ենք մենք նրանց զինվորական ծառայության մեջ և ռազմադաշտում:

Մյուս կարևորագույն և առաջնային հարցը, որը նույնպես միջնորդավորված կապ ունի խնդրո առարկայի հետ, այն է, թե դասախոսի գիտական հետաքրքրությունները, գիտական ուսումնասիրությունների արդյունքներն ու գիտական մշակույթը **որքանով են օժանդակում դասավանդման արդյունավետության բարձրացմանը**: Հարցի ենթակայությամբ ներկայացվել է հնարավոր պատասխանների ցանկը, նաև տրվել է ազատ արտահայտվելու հնարավորություն, ընդ որում՝ 2016 թվականին դասախոսներն ընտրել են առաջարկված տարբերակներից միայն մեկը, իսկ 2017 թ. առցանց հարցման ժամանակ ընտրել են մի քանի տարբերակ: Սրանով է պայմանավորված պատասխանների 154 թիվը, որն ավելի շատ է, քան հարցման մասնակիցների թիվը (**Աղյուսակ 3**):

Աղյուսակ 3.

Առավելապես որոն՝ ց միջոցով են Ձեր գիտական գործունեության արդյունքները ուսանողությանը դառնում մատչելի	2016		2017	
	Քանակ	%	Քանակ	%
առկա է ամբիոնում	5	6,0%	18	26,5%
Էլեկտրոնային համապատասխան կայքէջերի միջոցով	1	1,2%	22	32,4%
առկա է մասնաճյուղի գրադարանում	5	6,0%	21	30,9%
ներառվում են դասախոսություններում	62	74,7%	54	79,4%
ուսանողական պրակտիկաների ընթացքում	1	1,2%	6	8,8%
կուրսային և ավարտական աշխատանքներում, ուսանողների հետ շփումներում ու նրանց տրամադրվող խորհրդատվություններում	8	9,6%	32	2,9%
Այլ	1	6,0%	1	1,5%
Ընդամենը	83		154	

Դասախոսների 75-80%-ը նշել է, որ իրենց **գիտական աշխատանքների արդյունքներն** ուսանողությանը մատչելի են դառնում իրենց դասախոսությունների միջոցով: Պատասխանները վկայում են, որ դա միակ ճանապարհը չէ: Դասախոսները կարևորում են նաև պրակտիկաների, կուրսային և ավարտական աշխատանքների, ուսանողների հետ արտալսարանային աշխատանքների միջոցով նրանց գիտության նվաճումներին իրազեկելու և ներառելու ճանապարհը:

Կարծում ենք, որ դասախոսություններում գիտական արդյունքների լայնորեն օգտագործման նշված փաստը, որպես երևույթ և՛ բնական է, և՛ դրական: Միաժամանակ դրա գուզակցումը ուսանողների հետ արտալսարանային հաղորդակցման, պրակտիկաների ընթացքում որպես ռեսուրս կարող է իրապես օժանդակել առարկայական ծրագրերի բովանդակության ավելի արդյունավետ յուրացմանը: Այստեղ ևս ամբիոնի դիրքորոշումը,

դասախոս-ամբիոն համագործակցության համակարգը երկրորդական նշանակություն չունի: Եթե տվյալ համագործակցությունն այնպիսին է, որ ուսանողների մեջ գիտական հետաքրքրությունների զարգացումը, սեփական գիտական արդյունքներով թեման կամ շոշափվող խնդիրներն ավելի մատչելի դարձնելը իրապես արժևորվում է, ապա օբյեկտիվորեն դասախոսներն իրենք պետք է շահագրգռված լինեն ավելի շատ արտալսարանային շփումների, պրակտիկաների հնարավորություններն ավելի լայն օգտագործելու հարցում: Իհարկե, ուսանողների նախաձեռնողականությունը սույն հարցում (ինչի «դեֆիցիտը» թերևս ակնհայտ է) կարևոր է, սակայն պակաս կարևոր չէ նաև դասախոսների ու ամբիոնի «համբերատարությունը և համառությունը» նման նախաձեռնողականության խթանման գործում:

Հարկ է նաև խոստովանել, որ մասնաճյուղում «Կրթական ծրագրի պատասխանատու»-ի ինստիտուտի ձևավորումը ևս նման նախաձեռնողականության լրացուցիչ լիցք է պարունակում, քանզի այն ուսանողների և գործատուների հետ լիարժեք ու համակողմանի համագործակցություն ծավալելու, ապագա մասնագետների մեջ գիտականության նկատմամբ ակտիվ ու շահախնդիր վերաբերմունք ձևավորելու ավելի մեծ հնարավորություններ ունի: Հենց գիտականության, քանի որ այն ներառվել է ժամանակակից աշխատանքային գործունեության գրեթե բոլոր ոլորտներում: Կարծում ենք պատահական չէ այն փաստը, որ հավաքականորեն դասախոսներն այդքան էլ բարձր չեն գնահատել ուսանողների հետազոտական կարողությունները (*Աղյուսակ 4*).

Աղյուսակ 4.

<i>Ելնելով Ձեր մասնագիտական փորձից ինչպե՞ս կգնահատեք մասնաճյուղի.</i>	Միջ.գն.	
	2016	2017
ուսանողների հետազոտական կարողությունները	3,01	3,16
Ուսանողական գիտական ընկերության (ՈԻԳԸ) գիտական գործունեությունը	2,75	3,09

Մա նշանակում է, որ դասախոսների հավաքական գիտակցության մեջ առկա է ուսանողների գիտական ներուժի զարգացման ու դրա կիրարկման կազմակերպմանը կոչված օղակի՝ ՈԻԳԸ գործունեության կատարելագործման խնդիրը: Տվյալ խնդրի լուծման գլխավոր պատասխանատուներն են նաև ամբիոնն ու նրա դասախոսական կազմը, որոնց գործունեության մեջ նախաձեռնողաբար պետք է ավելի կարևորվի ուսանողության, նրա կազմակերպչական օղակների (ՈԻԽ, ՈԻԳԸ) հետ համագործակցությունը: Սույն հարցում դասախոսների զուտ մասնագիտական գիտելիքների ու հմտությունների առկայությունը բավարար չէ:

Գիտական մշակույթը, ապագա հնարավոր գիտական գործունեությունը պետք է համակարգի կողմից մատուցվի որպես ինքնաբավ արժեք բարձրագույն կրթություն ունեցողի համար: Իսկ սա լիարժեքորեն հնարավոր է միայն այն դեպքում, երբ ունի աշխարհայացքային համոզմունքի կարգավիճակ.

- Այստեղ է, որ խաչվում են ուսումնական պլանի ընդհանուր կրթական և մասնագիտական բլոկների շահերը:

- Այստեղ է, որ հումանիտար ու մասնագիտական առարկաների դասախոսների աշխարհայացքային համախոհությունը ձեռք է բերում առանցքային նշանակություն:
- Այստեղ է, որ ցանկացած դասախոս և առաջին հերթին հումանիտար առարկաների դասախոսներն իրենց անձնական նկարագրով ու վարքով պետք է լինեն իրենց մատուցած սոցիալ-բարոյական գիտելիքների ճշմարտացիության մարմնավորումը:

Այլ կերպ ասած՝ դասախոսը պետք է ոչ միայն անհրաժեշտ գիտելիքները մատչելիորեն մատուցի, այլև «մատուցի ընդօրինակելի մատչելի վարք»։ Ցանկալի է, որ ուսանողի աշխարհայացքային նկարագիրն ու բարոյական վարքը դառնան ամփոփիչ ատեստավորման գնահատման համակարգի տարրեր: **Մրցակցայության ու բարոյապես արդարացված հավակնությունների տեսանկյունից**, եթե տվյալ չափանիշով հանրապետության բուհական համակարգում մրցույթ հայտարարվի, թերևս նման ուսանողների քանակով մասնաճյուղը գրավի բարձրակարգ տեղերից մեկը:

Սույն հարցում ենթադրվում է, որ «Կրթական ծրագրի պատասխանատու»-ի ինստիտուտը բացում է ամենալայն հեռանկարներ: Վարկածի տեսքով առաջադրում ենք այն տեսակետը, որ տվյալ ինստիտուտի կայացման դեպքում կստանանք մասնաճյուղի ուսանողության հետազոտական կարողությունների որակապես ավելի բարձր գնահատական, քան դասախոսների տված վերոնշյալ գնահատականը (նկատի ունենալով ինչպես հայ ազգային, այնպես էլ նրա մաս կազմող երիտասարդության և հատկապես Տավուշի մարզի գիտակցության մեջ պատմականորեն ձևավորված կրթագիտական բարձր ցենզը):

Մեզ հետաքրքրել է նաև դասախոսների կարծիքն այն մասին, թե ամբիոնում **որքանով են փոխկապակցված հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացները (Գրաֆիկ 43)**: 2016 թ. հարցմանը մասնակցած 83 դասախոսներից 45-ը (54,2%) և 2017 թ. 68 դասախոսներից 32-ը (47,1%) գնահատել են «բարձր» և «շատ բարձր»: Այսինքն՝ տվյալ փոխկապակցվածությունը բավարար մակարդակի վրա է և կարող է ավելին լինել, եթե արտաքին խոչընդոտները նվազեն:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը՝ որպես գիտաուսումնական հաստատություն, վաղուց կայացել է, ունի գիտական մթերք թողարկելու լայն պոտենցիալ: Երբ դասախոսը դադարում է զբաղվել գիտությամբ, նա հեռանում է նորի որոնումից, ու նրանից հեռանում է նոր ժամանակներին ծառայելու անհրաժեշտության գիտակցումը: Այս դեպքում այդ հաստատությունն ընկալվում է ոչ որպես գիտության օջախ ու դարբնոց: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղն ունի գիտության տարբեր բնագավառներում լուրջ ավանդներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ, որոնցից շատերը Մայր բուհի անձնակազմից են:

2010 թվականից մասնաճյուղն իր «**Գիտական հոդվածների ժողովածու**»-ով², որը 2011 թվականին անվանակոչվել է «**Ակունք**» գիտական հոդվածների ժողովածու³, մտել է գիտական կյանք: Այդ հանդեսով դասախոսները ստանում են մի նոր հնարավորություն դրսևորելու

² Գիտական հոդվածների ժողովածու (<http://ijevan.y-su.am/wp-content/uploads/2011/08/collection-of-scientific-articles-2010.pdf>):

³ «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու (<http://ijevan.y-su.am/science/collection-of-scientific-articles/>):

իրենց գիտական օժտվածությունները, հանդես գալու նոր գիտական խոսքով ու մտքով՝ գիտական առումով ևս անսասան դարձնելով ԵՊՀ-ի միակ՝ Իջևանի մասնաճյուղը:

Հարցման կազմակերպիչներն անդրադարձել են նաև մասնաճյուղի **«Ակունք» գիտական հոդվածների ժողովածուում տպագրվելու** հնարավորություններին ու դասախոսների նախաձեռնողականությանը: Այդ հարցի վերաբերյալ պատասխաններն ավելի բազմազան են ու բազմաբնույթ: Այստեղ նախ պետք է նշվի տարբեր ձևակերպումներով հարցադրման իմաստին անդրադառնալը, մասնավորապես այն, որ ժողովածուն միայն մասնաճյուղի համար չէ, որ մասնաճյուղի դասախոսների կողմից հրատարակված հոդվածների փաստացի քանակությունը հարկավոր չէ «քիչ կամ պակաս» որակել, այլ պետք է համարել բավարար: Դա պայմանավորված է դասախոսների մոտիվացումով (կան դեպքեր, երբ արդարացված է ուրիշ պարբերականներում հրատարակումը՝ վերջին փաստարկը հատկապես վերաբերում է հրավիրված դասախոսներին): Նման փաստարկներ նշված են մի քանի պատասխաններում, իսկ մեկում ուղղակի ասված է. «Ես կասեի հակառակը, նման փոքր բուհի համար դա ուղղակի փայլուն արդյունք է»:

Ժողովածուի լիարժեքությանը խանգարում է միայն նրա նեղ՝ հումանիտար ուղղվածությունը, բնագիտական ուղղվածության հոդվածները տպագրելու հնարավորությունը բացակայում է:

Վերոնշյալ որակումների հետ թերևս համահունչ են այն հարցի պատասխանները, թե **հետազոտական արդյունքները հրատարակելիս որ գործոններն են դասախոսների համար առաջնային** (կարելի էր ընտրել առաջադրված գործոններից երկուսը): 2016 թ. հարցման մեջ 150 պատասխաններից 57-ում առաջնային է համարվել ԲՈՀ-ի ցուցակում պարբերականի առկայությունը, 38-ում՝ անվճարությունը, 35-ում՝ ամսագրի վարկանիշը, 15-ում՝ հրատարակման արագությունը և վերջապես 5-ում՝ իրավիճակային նպատակահարմարությունը (**Աղյուսակ 5**):

Աղյուսակ 5.

<i>Հետազոտական արդյունքները հրատարակելիս առաջնայինության գործոնները.</i>	Պատասխանած դասախոսների թիվը								
	Ընդ.	ըստ գիտական աստիճանի			ըստ տարիքի			ըստ սեռի	
		գիտ. դոկտ.	գիտ. թեկն.	առանց գ/ա	<=30	31-51	>51	ար	իգ
ամսագիրը հաստատված լինի ԲՈՀ-ի կողմից	57	1	27	29	7	33	17	24	33
իրավիճակային նպատակահարմարությունը	5		4	1		1	4	3	2
հրատարակությունը իրականացվի կարճ ժամանակահատվածում	15	1	9	5	3	8	4	7	8
տպագրությունը լինի անվճար	38		21	17	2	23	13	17	21
տվյալ ամսագիրը ունենա բարձր հեղինակություն	35		22	13	9	15	11	23	12
Ընդամենը	150	2	83	65	21	80	49	74	76

Մա, իհարկե, չի բացառում ավելի շատ ու օգտակար գիտական աշխատանքների (հատկապես մեթոդական ուղղվածության) պատրաստումն ու հրատարակումը մասնաճյուղի «Ակունք» ժողովածուում:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ կարող ենք փաստել.

- ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գերակշիռ մեծամասնությունը գիտական գործունեությունը համարում է դասախոսական աշխատանքի պարտադիր բաղադրատարր:
- Ընդհանուր առմամբ գիտական և մեթոդական աշխատանքների քանակությունը, դրանց արդյունքների ներառվածությունը դասավանդման գործընթացում դասախոսական և գիտական աշխատանքների իրական փոխգործակցության բավարար ապացույց են:
- Գիտական որոշակի պասիվությունն առավելապես ունի արտաքին, իրենց անձնական ցանկությունից ու համոզվածությունից դուրս պայմանավորվածություն. այն հիմնականում առնչվում է նյութական-կենցաղային ու «ամբիոնային» պայմանների հետ:
- Գիտական ակտիվության և հետաքրքրությունների հարցում որոշ չափով թերագնահատվում է «ինքնաքննադատականության» և դեպի տարածաշրջանային հիմնահարցերը հետազոտական ուղղվածության դերը:

Դասախոսների թե՛ ուսումնական, և թե՛ գիտական գործունեությունը (առանձնապես երիտասարդ դասախոսների) գտնվում է մասնաճյուղի ղեկավարության մշտական ուշադրության կենտրոնում: Ղեկավարությունն առայժմ նրանց գիտական գործունեությանն աջակցում է գիտաժողովների գործուղելու միջոցով, թեև քիչ, բայց մասնաճյուղում հանրապետական (նաև միջազգային) գիտաժողովներ կազմակերպելով, օժանդակելով նրանց գիտական աշխատանքների, ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկների հրատարակմանը, նաև ֆինանսական խրախուսմամբ: Այժմ մասնաճյուղը վերանայում է պրոֆեսորադասախոսական կազմի գիտական գործունեության խրախուսման իր մեխանիզմները՝ հաշվի առնելով նաև հարցումների ընթացքում դասախոսների կողմից ներկայացված առաջարկները:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին